# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1411-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատվածկարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ա որոշումը, Կարեն Սիսակյանի 19.10.2023թ. թիվ 5797 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ 3-րդ փողոց 56 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Կարեն Արամի Սիսակյանի /ծնված 12.01.1976թ./, սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 03-րդ փողոց 56 հասցեում գտնվող գույքային միավորների՝

2777.0 քմ օրինական հողամասի վրա 1980թ. կառուցված 367.0 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:

1.Կարեն Արամի Սիսակյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 13052022-04-0057/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի գյուղ Սարդարապատ 3-րդ փողոց 56 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 2777.0 հա օրինական հողամասի վրա կառուցված օժանդակ շինությունը 146.3 քմ. արտաքին և 126.1 քմ ներքին մակերեսով,թոնրատունը 73.4քմ արտաքին և 60.0 ներքին քմ մակերեսով ճանաչել օրինական,իսկ ծածկը համարել ինքնակամ:

2 .Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 219.7 քմ մակերեսով ինքնակամ օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 725.4 ՀՀ դրամ ընդհանուր 159370 (մեկ հարյուր հիսունիննը հազար երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

3. Ընդունել ի գիտություն,որ
1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ 3-րդ փողոց 56 հասցեում գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023RTPHVF:
5.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբեր 30
ք. Արմավիր